ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ «ՆՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ» ՄՇԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ (XX դ. 30-ԱԿԱՆ թթ.)

Արդի ժամանակաշրջանում ծավալվող գաղափարական սուր պայքարը, ի թիվս այլևայլ միջոցների, ներառել է պատմագիտությունը՝ լայնորեն օգտագործելով նրա հին ու նորագույն տվյալները։ Ահա թե ինչու, ներկայումս, բուրժուական պատմական քննադատության կոնցեպցիաներին նվիրված աշխատություններն առավել քան կարևոր նշանակություն են ստանում։

Սովետական թուրքագետները մեծ ներդրում ունեն Թուրքիայի հասարակական-քաղաքական մտքի պատմությունն ուսումնասիրելու գործում։ Տարբեր տարիներ լույս են տեսել բազմաթիվ հրատարակություններ՝ նվիրված թուրք գիտնականների պատմական հետազոտություններին։ Թուրքական պատմագիտության մակարդակի և արդի վիճակի մասին կարևոր հետևություններ և գնահատականներ ենք գտնում թուրք պատմաբանների աշխատություններին, թուրքական գիտական պարբերականներին նվիրված գրախոսականներում, ինչպես նաև առանձին մենագրություններում տեղ գտած պատմագիտական ակնարկներում և թուրքական պատմագիտության առանձին պրոբլեմներ արծարծող հոդվածներում[1]։

Թուրք պատմաբանների մեծամասնության համար հիմնական է մնում իր արմատներով դեպի բուրժուական նացիոնալիզմի դոկտրինան գնացող, XX դարի 20—30-ական թվականների բարեփոխումների ժամանակ ձևավորված «նոր պատմական կոնցեպցիան»։

Սովետական պատմագրության մեջ այդ խնդիրը հատուկ հետազոտության առարկա չի դարձել, թեև մեր արևելագետների մի շարք աշխատություններում այդ առթիվ կարելի է գտնել արժեքավոր շատ

փաստեր և դիտարկումներ[2]։ Այս հարցին հպանցիկ անդրադարձել են նաև արևմտյան որոշ գիտնականներ[3]։

Հենվելով հիմնականում թուրքական աղբյուրների վրա, մենք նպատակ ունենք քննարկել «նոր պատմական կոնցեպցիայի» ստեղծման պատճառներն ու պայմանները, ինչպես նաև ցույց տալ, թե այն ինչպիսի արտացոլում է գտել թուրքական պատմական ընկերության առաջին աշխատություններում։

1918—1923 թթ. ազգային պայքարի ավարտից և թուրքական հանրապետության հիմնադրումից հետո երկրի առջև դրվեց տնտեսության, քաղաքականության և մշակույթի ասպարեզում արմատական վերափոխություններ մտցնելու խնդիրը։ Թուրքական ազգային բուրժուազիայի առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ այնպիսի գաղափարախոսության մշակումը, որի միջոցով կարողանար պատմականորեն հիմնավորել ինքնուրույն զարգացման իր իրավունքը։ Եվ նացիոնալիզմը դարձավ նորաստեղծ բուրժուազիայի գաղափարախոսությունը, որն իր արտացոլումը գտավ նաև այսպես կոչված «նոր պատմական կոնցեպցիայում»։

Իշխանության դլուխ անցնելով, քեմալականները ձևականորեն հրաժարվեցին պանթյուրքիզմի գաղափարախոսությունից և քաղաքականությունից։ 1921 թ. դեկտեմբերին, ելույթ ունենալով Ազգային մեծ ժողովում, Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը հայտարարեց. «Պարոնայք, մեր համաքաղաքացիներից, հավատակիցներից և հայրենակիցներից ամեն մեկը մտովին կարող է ունենալ իր մեծ իդեալը, նա ազատ է և ինքնուրույն։ Ոչ ոք իրավունք չունի խառնվելու նրա գործերին։ Սակայն Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հետևում է հիմնավոր և կայուն քաղաքականության, որը կոչված է ազգային որոշակի սահմաններում ապահովելու թուրքերի կյանքը և անկախությունը։ Ազգը ներկայացնող Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը ամենևին հեռու են պատրանքներից և իրենց քաղաքականության մեջ բավական համեստ ու իրատես են... Պարոնայք, այս ազգն այսօր կառափնարանի հասցրած գործողությունների և արարքների արմատները թաքնված են պատրանքների ու զգացմունքների մեջ»[4]։

Քեմալականները փոխեցին անգամ «թյուրքչուլուք» տերմինը, որը միաժամանակ նշանակում էր թուրքիզմ (այսինքն՝ թուրքական նացիոնալիզմ), և թյուրքիզմ (այսինքն՝ պանթյուրքիզմ), փոխարինելով

այն «միլլիյեթչիլիք» բառով (հետագայում՝ «ուլուսչուլուք»), որ նշանակում է նացիոնալիզմ։ Միլլիյեթչիլիքը հայտարարվեց ժողովրդահանրապետական կուսակցության լոզունգներից մեկը և մտավ նրա ծրագրի մեջ[5]։

Բայց ո՞չ քեմալականները, և ո՞չ էլ ինքը՝ Քեմալ Աթաթուրքը, հետևողական չգտնվեցին պանթյուրքիզմի դատապարտման հարցում։ Աթաթուրքը հետագայում ներողամտություն դրսևորեց մի շարք անձանց գործողության հանդեպ, որոնց հոդվածներում և գրքերում պրոպագանդվում էր այդ հետադիմական գաղափարախոսությունը, և դա վկայում է բուրժուական գաղափարախոսության մեջ և երկրի հասարակական կյանքում հետադիմական միտումների դեմ պայքարելու չկամությունն ու անկարողությունը։ Նույնպիսի անհետևողականություն դրսևորվեց նաև Աթաթուրքի առաջ քաշած «նոր պատմական կոնցեպցիայի» և թե թուրքական պատմական կոնգրեսի աշխատանքների նկատմամբ։

Օսմանյան միապետության կործանումից հետո քեմալականների առաջ դրվեց համազգային պետություն ստեղծելու խնդիրը (1920 թ. հունվարի 28-ի Ազգային համաձայնագրով որոշված սահմանների շրջանակում)[6]։ Այս իմաստով Աթաթուրքը առաջնահերթ էր համարում «մարդկանց գիտակցությունից արմատախիլ անել միապետության կամ իսլամական աշխարհի հանդեպ եղած հավատարմության գաղափարը՝ փոխարինելով այն հայրենիքին նվիրվածության գաղափարով»[7]։

Այս նպատակին հասնելու միջոցներից մեկը համարվեց պատմությունը, իսկ նրա նախաձեռնությամբ ստեղծված Թուրքական պատմական ընկերությունը[8] կոչված էր դառնալու գաղափարախոսության և մշակույթի ասպարեզում պետական քաղաքականությունն անցկացնող միջնորդ։ Թուրք գիտնականների առջև դրված էր իր էությամբ նացիոնալիստական խնդիր, այն է՝ ապացուցել անատոլիական թուրքերի բնիկ լինելը և դրանով իսկ «գիտականորեն» հիմնավորել նրանց իրավունքը Փոքր Ասիայի տարածքի նկատմամբ։ Պատմության հանդեպ քեմալականների նման ակտիվությունը պատահական չէր։ Ինչպես հայտնի է, 1919—1922 թթ. Արևմտյան Անատոլիան գրաված հույները հայտարարել էին, թե այն պետք է պատկանի Հունաստանին, քանի որ այդտեղ հնում գոյություն է ունեցել հունական քաղաքակրթություն։ Իտալացիները ևս, վկայակոչելով այն փաստը, որ Անատոլիան ժամանակին մտել է Հռոմեական մեծ կայսրության մեջ, 1919—1921 թթ. գրավեցին Հարավային Անատոլիան[9]։

Որպեսզի նման հայտարարությունները անհիմն նկատվեին, Աթաթուրքը թուրք գիտնականներին կոչ արեց Թուրքիայի տարածքում ապրած հնագույն բնակիչների մեջ փնտրել ժամանակակից թուրքերի նախնիներին։

Բացի դրանից քեմալականները գտնում էին, որ թուրքերին նվիրված եվրոպական գիտնականների աշխատությունների մեծ մասը ոչ օբյեկտիվ բնույթ է կրում։ Սկզբում թուրքերին համարում էին «աստծո պատիժ»[10]։ Հետագայում, երբ ակնհայտ դարձավ Եվրոպայից Օսմանյան կայսրության հետ մնալը, նրան սկսեցին վերաբերվել քամահրանքով և արհամարհանքով[11]։

Աթաթուրքը գտնում էր, որ պատմությունը պիտի դառնա ազգային պայքարի հոգևոր ճակատը։ «Թուրքերի և եվրոպացիների դարավոր թշնամական հարաբերությունների հետևանքով,—գրում էր նա,— համաշխարհային պատմագրության մեջ գերակշռում են թուրքերի հանդեպ արհամարհանքի և թշնամական վերաբերմունքի արդյունք հանդիսացող հայացքները։ Թուրքերին նայել են որպես երկրորդական, բոլոր իմաստներով հետամնաց մի ժողովրդի։ Թուրքերին նայել են սոսկ որպես ռազմիկների, ասպատակիչների։

Բացի այդ, եվրոպական պետությունները ապավինելով պատմական փաստերին, առաջ են քաշել այն գաղափարը, թե թուրքերը իրավազոր չեն այն տարածքների նկատմամբ, որտեղ դարեր ի վեր ապրել են։ Այս պնդումները հիմք հանդիսացան բաժանելու Օսմանյան կայսրությունը՝ առաջին համաշխարհային պատերազմի ավարտին»[12]։

«Թուրքերի նկատմամբ նման անբարյացակամությունը Աթաթուրքի հոգում խոր զայրույթ առաջացրեց»,—գրում է Ու. Իդեմիրը[13]։

Ասվածից արդեն պարզ է, որ քեմալական շարժման հաղթանակից հետո քեմալականները «լուրջ» պատճառներ ունեին դիմելու պատմության ուսումնասիրությանը։ 20-ական թվականներին Թուրքիայում ճանապարհորդած սովետական հետազոտող Յու. Տիշանսկին իր հուշերում գրում է. «Մուսթաֆա Քեմալն իր ողջ ժամանակը վատնում է պատմալեզվաբանական որոնումների վրա։ Հատուկ հանձնաժողովի օգնությամբ, որի կազմում են թուրք համարյա բոլոր և եվրոպացի որոշ գիտնականներ, նա ստեղծում է իր պատմական տեսությունը, որը կոչված է ապացուցելու, թե թուրքերը հնագույն քաղաքակիրթ ժողովուրդներից են, սկզբնավորել են հետագա մի շարք քաղաքակրթությունները և որ նրանք բարբարոս ու հետամնաց չեն»[14]։ Թուր-

քիայի պատմությանը առնչվող նյութերը ուսումնասիրելու գործում ներգրավեցին բոլոր նրանց, ովքեր զբաղվում կամ կարող էին զբաղվել պատմությամբ։ Նյութերի հիման վրա կազմվում էին հաշվետվություններ և ներկայացվում Աթաթուրքին։ Այս հետազոտությունների արդյունքը եղավ Աթաթուրքի պատրաստած «Թուրքական պատմության հիմնական ուղղությունները» աշխատությունը[15], որի առաջաբանում ասված էր. «Մեր նախնիները, որ մեծ տերություններ են ստեղծել, դարձան նաև մեծ քաղաքակրթությունների ստեղծողներ։ Մեր պարտքն է՝ հետազոտել, ուսումնասիրել, և թուրքական ժողովրդին ու ողջ աշխարհին պատմել այդ մասին։ Եթե թուրք երեխաներն իմանան իրենց նախնիների մեծագործությունները, նրանք իրենց մեջ ուժ կգտնեն ավելի կարևոր գործեր իրականացնելու համար»[16]։

Այս աշխատանքի ելակետային դրույթներից մեկը հետևյալն էր. հնագույն ժամանակներում, երաշտի և տնտեսական այլ բնույթի պատճառների հետևանքով, Միջին Ասիայից քոչվորները մեծ տեղաշարժ են կատարել։ Քոչվոր այս ցեղերը խոսել են թյուրքական լեզուներով և պատկանել են ալպիական կարճագլուխ ռասային։ Նրանք վերաբնակեցված վայրերն են բերել իրենց առաջավոր մշակույթը։ Այս դրույթը դարձավ պաշտոնական «նոր պատմական կոնցեպցիայի» հիմքը։ Դրա ապացուցմանը նվիրվեց թուրք գիտնականների ուսումնասիրությունների մի ամբողջ շարք։

Այս դոկտրինայի լույսի տակ դասախոսներ պատրաստելու համար որոշվեց 1932 թ. հուլիսին ստեղծել հատուկ դասընթացներ։ Հետագայում դրանք ստացան Թուրքական առաջին պատմական կոնգրես անվանումը, և նրա արձանագրություններն էլ հրատարակվեցին այդ անվանմամբ[17]։

Այդ կոնգրեսը կազմակերպվեց Թուրքիայի ժողովրդական կրթության մինիստրության կողմից։ Մասնակցում էին 232 հոգի, այդ թվում՝ Ստամբուլի համալսարանի պատմության պրոֆեսորներ, լիցեյների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների դասախոսներ։

Բնականաբար, կոնգրեսի հիմնական ուշադրությունը բևեռված էր թուրքերի ծագումնաբանության խնդրին։ Թուրք գիտնականները որոշեցին ապացուցել Անատոլիայում թուրքերի բնիկ լինելը, ծայրահեղ դեպքում՝ նեոլիթի ժամանակներից բնավորվելը։ Այս հարցին էր մասնավորապես նվիրված Աֆեթ Ինանի «Նախապատմական շրջանում և պատմության արշալույսին»[18] զեկուցումը, ուր նա կանգ առավ հետևյալ հարցերի վրա.

Երկրի տարիքը։ Միջին Ասիայի տեղագրությունը[19]։ Ժողովուրդների տարածումը և բնակեցումը Երկրի վրա։ Ռասաների հարցը։ Ո՞վ է Միջին Ասիայի բնիկ ժողովուրդը[20]։

Իր զեկուցման մեջ Աֆեթ Ինանը նկատում է, որ «...դժվար է պնդել, թե մարդկությունը երկրի վրա առաջացել է կոնկրետ մի տեղում։ Բայց մարդկության բարձր քաղաքակրթության օրրանը կարող էր լինել և եղել է միմիայն երկրի մեկ կետում՝ Միջին Ասիայում։ Պատմական հեռավոր այդ դարաշրջանում,—ըստ Աֆեթ Ինանի,—երկրագնդի բոլոր անկյուններում ապրել են երկայնագլուխ մարդիկ։ Միջին Ասիայում առաջացել է մի ուրիշ ռասա, որը և փաստորեն ստեղծել է նեոլիթի մշակույթը։ Հենց նրանք էին, որ առաջին անգամ յուրացնելով հողագործությունը և անասնապահությունը՝ մարդկության առջև բացեցին մետաղի դարաշրջանը։ Նրանք խոսել են մեկ լեզվով՝ թյուրքերեն։ Այս ռասան Միջին Ասիայից տարաբնակեցվեց տարբեր վայրերում՝ իր հետ տանելով «բարձր» մշակույթ։ Նա «բարձր կուլտուրա» է տարել Իրան, Հնդկաստան, Փոքր Ասիա և Եվրոպա։ Այդ ռասայի մի ճյուղն էլ խեթերն են, այսինքն՝ պրոտոթուրքերը, որոնք բնակեցրել են Անատոլիան»։

«Արևմտյան գիտնականները գտնում են,—շարունակում է Ա. Ինանը,—որ եվրոպական քաղաքակրթության հիմնադիրները եղել են արիական ցեղերը։ Նույնիսկ նրանց ինքնանվան մեջ՝ արի կամ արյա, նկատվում է թուրքական ակունքը։ Այն է՝ ար-էր (տղամարդ, մարդ—Ռ. Հ.)։ Արիական համարվող լեզուներում պետք է փնտրել նախ և առաջ թուրքական արմատներ, և ոչ թե հնդկական կամ պարսկական։ Այս հարցում պետք է սպասել մեր թուրք գիտնականների բացատրություններին»[21],—եզրափակում է նա։

Հարց է ծագում. ինչի՞ց ելնելով են կատարվում նման եզրահանգումներ։ Ամենից առաջ մարդաբանության փաստերից։ Տարիների ընթացքում Ա. Ինանը առողջապահության, լուսավորության և պաշտպանության մինիստրությունների աջակցությամբ հետազոտել է ավելի քան 64 հազար մարդկանց, որի արդյունքներն ամփոփված են նրա «Թուրք ժողովրդի մարդաբանական բնութագիրը և թուրքական պատմությունը» աշխատության մեջ։ Այս կամ այն շրջանի բնակիչները հետազոտվել են առանց նրանց ազգային պատկանելությունը նկատի առնելու և դա արվել է միանգամայն գիտակցաբար։ Հեղինակը դրում է, որ ցանկացել է ցույց տալ Թուրքիայի բնակչության ռասսայական միասնականությունը[22]։ «Սկսած նեոլիթի ժամանակներից (Քում թե-

փեի պեղումները) մինչև օսմանները, մարդկային կմախքները մարդաբանական տեսակետից համարյա նույն բնույթի են»[23]։ Այսպիսով, եզրակացնում է Ա. Ինանը, «համարյա միշտ տիրողները և հպատակները պատկանել են նույն այդ էթնոսին»[24]։

Ինչպես տեսնում ենք, հեղինակի նենգափոխված եզրահանգումները հարմարեցված են իրենց առջև դրված խնդիրներին։ Մի բան, որ արժեքաղրկում է նրա հավաքած փաստական «հարուստ» նյութը։

Ժողովրդական կրթության մինիստր Էսադ բեյը (Բոզքուրթը) ելույթ ունենալով թուրք պատմաբանների առաջին կոնգրեսում, ամբիոնից հայտարարեց, որ թուրքերեն լեզուն «նախալեզու» է և որ այն հիմքն է բոլոր մյուս լեզուների[25]։

Կոնգրեսում այդ մասին խոսեց նաև Ռըֆաթ Սամիհը իր «Թուրք լեզվի կապը մյուս լեզուների հետ» զեկուցման մեջ[26]։

«Նոր պատմական կոնցեպցիան» ապացուցելու համար թուրք գիտնականներն սկսեցին դիմել այնպիսի հակագիտական մեթոդների, ինչպիսիք են հնչյունաբանական սովորական նմանությունները։ Նրանք «գտան», որ «խաթի», «էթի» բառերը (ինքը՝ Աթաթուրքն առաջարկեց խեթերին անվանել «էթի») ոչ այլ ինչ է, եթե ոչ թուրքական «աթա» (նախահայր) բառը[27]։

Ռեշիդ Գալիբն իր «Թուրքական ռասան և ընդհանուր ակնարկ քաղաքակրթության պատմության» զեկուցման մեջ հայտարարեց, թե Միջագետքի քաղաքակրթությունը՝

1. տեղական (բնիկ) չէր,
2. նրա ստեղծողը Միջին Ասիայից եկվորներն են,
3. շումերները եղել են թուրանցիներ, ավելի ճիշտ՝ թուրքեր[28]։

Իր «Ընդհանուր ակնարկ էգեյան քաղաքակրթության առաջացման» զեկուցման մեջ Հասան Ջամիլ Ջեմբելը ասում էր, թե «խեթերը, շումերները, եգիպտական և էգեյան քաղաքակրթությունները մեկ շղթայի օղակների նման ձգվում են Ալթայից»[29]։

Թուրք քաղաքական գործիչները, ապա նաև գիտնականները որոշեցին մարդկության «նախահայրը» լինելու հպարտությունը ներշնչել իրենց ժողովրդին, նրան վերագրելով աշխարհի մյուս ժողովուրդների կուտակած վաստակն ու արժանիքները։ Այսպես, օրինակ. Էսադ բեյը հայտարարեց, թե հենց թուրքերն են «առաջինը վառել համաշխարհային մշակույթի ջահերը» և «փրկել Եվրոպան քարանձավային կյանքից»[30]։

Սրանք լոկ ճամարտակություններ չեն՝ թռած այդ ժամանակվա ժողովրդական մինիստրի շուրթերից։ Լուսավորության ասպարեզում նրանք վարում էին շատ որոշակի քաղաքականություն, այն է՝ երիտասարդությանը դաստիարակել ծայրահեղ ազգայնամոլության ոգով։

«Նոր պատմական կոնցեպցիայի» գլխավոր դրույթներն ընկան «Թարիհ» քառահատոր գրքի հիմքում, որ դարձավ պատմության դասագիրք[31]։ «Թարիհ»-ում թուրք գիտնականները ավելի հեռուն գնացին։ Թուրքերի տաղանդին վերագրվեց մշակույթի ծաղկումը Հին Չինաստանում[32], սկյութների[33] մոտ, Հնդկաստանում[34], Եգիպտոսում[35] և այլուր, հենվելով եվրոպական գիտնականների վրա[36], որոնք երբեմն «Թուրանական» են համարում ոչ սեմական և ոչ հնդեվրոպական ժողովուրդներին և ցեղերին՝ ամենևին էլ այդ տերմինի տակ նկատի չունենալով թուրքերին։ Ահա թե ինչ է գրում «Թարիհ»-ը գրչության առաջացման մասին. «Այն ստեղծվել է թուրքերի կողմից նախապատմական ժամանակաշրջանում և տարածվել է ամբողջ աշխարհում»[37]։ Հայտնի է, որ մ.թ.ա. IV դարի վերջին և III-ի սկզբին Հարավային Միջագետքում առաջացավ հնագույն գրչություն։ Առաջավոր Ասիայի համարյա բոլոր ժողովուրդները փոխառնելով շումերներից սեպագրերի համակարգը, հարմարեցրին այն իրենց լեզվական առանձնահատկություններին[38]։ Եթե հետևելու լինենք թուրք գիտնականների տրամաբանությանը, համաձայն որի շումերները նախաթուրքերն են, ապա ողջ մարդկությունը պետք է հենց նրանց «պարտական» լինի, այդ մեծագույն նվաճման համար։

Ինչպես տեսնում ենք, թուրքական գիտնականները իրենց վարկածները հիմնավորելու համար դիմել են հին աշխարհի ժողովուրդների պատմության առանձին փաստերին։ Ուսումնասիրությունների ժամանակ կոնկրետ փաստերին անդրադառնալը դրական երևույթ է համարվում։ Սակայն, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը. «Փաստերը, եթե դրանք վերցվեն իրենց ամբողջության, իրենց կապի մեջ, ոչ միայն համառ են, այլև անվերապահորեն ապացուցիչ բան են։ Մանր փաստերը, եթե դրանք վերցվում են ամբողջությունից դուրս, կապից դուրս, եթե դրանք կցկտուր և կամայական են, հենց միայն, խաղալիք են կամ որևէ էլ ավելի վատ բան»[39]։

Թուրք գիտնականները նենգափոխելով փաստերը, պատմական առանձին կոնկրետ ուսումնասիրությունների արդյունքները, «Փոքր

Ասիայում գոյություն ունեցած բոլոր քաղաքակրթությունները վերագրում են թուրքական տաղանդավոր ազգին»[40]։

Հանրապետության հռչակումից հետո թուրք պատմաբանների գլխավոր ուշադրությունը կենտրոնացվեց «զուտ թուրքական անցյալի» որոնումների վրա։ Այս կապակցությամբ մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրվում էին թուրքերի էթնիկական ակունքները և փորձեր էին արվում ապացուցելու Անատոլիայում նրանց բոլորից վաղ երևան գալը։

Սովետական գիտնական Դ. Ե. Երեմեևը, բնութագրելով 30-ական թվականների թուրքական պատմագիտությունը, գրում է, որ այն չի խուսափել «ազգման հիվանդություններից»[41]։ Հազիվ թե կարելի լինի «հիվանդություն» անվանել որոշակի նպատակներով պատմությունը գիտակցաբար խեղաթյուրելը, մանավանդ.. որ XX դարի 30-ական թվականներին առաջ քաշված «նոր պատմական կոնցեպցիան», այսօր էլ շարունակում է հիմնադրույթ մնալ թուրքական պատմական ընկերության աշխատանքներում, ինչպես դա նշված է նրա կանոնադրության մեջ։ Թուրքական առաջին պատմական կոնգրեսի ամբիոնից, քառահատոր «Թարիհի» էջերում և այլ աշխատություններում թուրք գիտնականները հայտարարում էին, որ պատրաստվում են գրել իրենց ազգի «իսկական» պատմությունը՝ ի տարբերություն եվրոպական հեղինակների, որոնք կանխակալ դիրքերից են ներկայացրել «իրենց ազգի պատմությունը»։

Ինչպես բնորոշ է բուրժուական գիտությանը, այդ խնդրի իրականացման հարցում էլ նրանք հետևողական չգտնվեցին։ Եվրոպական նացիոնալիզմին նրանք հակադրեցին իրենց նացիոնալ-շովինիզմը։ «Նոր պատմական կոնցեպցիան» մշակվեց թուրքական բուրժուական նացիոնալիզմի զարգացման մթնոլորտում՝ միաժամանակ հանդիսանալով նրա արդյունքը և խթանը։ Իսկ, թե ինչպես է արտահայտվում այն ժամանակակից թուրքական պատմագիտության մեջ և ինչպիսի փոփոխություններ է կրել, դա արդեն հատուկ ուսումնասիրության նյութ է։

А. Р. ОГАНЕСЯН

К ВОПРОСУ О ВЫРАБОТКЕ В ТУРЦИИ «НОВОЙ ИСТОРИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ» (30-е гг. XX в.)

Резюме

Статья посвящена анализу причин и условий выработки в Турции «новой исторической концепции» (30-е гг. XX в.), ее отражению в первых трудах созданного тогда же Турецкого исторического общества. После победы кемалистского движения, для обоснования прав на создание собственной государственности, турецкими буржуазными идеологами перед учеными была поставлена задача: доказать автохтонность анатолийских турок, извечность их обитания на территории Малой Азии. Целый ряд работ турецких ученых был посвящен ее доказательству. Ставшая официальной доктриной эта концепция и сегодня остается руководствующей в работах Турецкого исторического общества. Используя, в основном, турецкие источники, автор показывает националистическую сущность этой концепции, дает критику первых работ турецких историков, созданных в ее духе.

1 *Տե՛ս* Ռ. Սահակյան, *Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակադիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, 1964 թ.*, Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ենթադրությունը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963 թ.*, Тверитинова А. С. Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии. „Византийский временник", VII, 1953, *էջ 9—31*; С. Ф. Орешкова „Кризис" исторической науки и некоторые новые направления исторических исследований в современной Турции. „Великий Октябрь и Турция", тезисы и резюме докладов и сообщений научной конференции (1977, Тбилиси). М., 1977, *դրքում, էջ 61—65*.

2 *Տե՛ս* М. К. Зулалян, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970; Д. Е. Еремеев, Этногенез турок, М., 1971.

3 *Այդ թվում կարելի է նշել* B. Lewis, The emergence of modern Turkey. London, 1962; D. Kushner. The rise of turkish nationalism, London, 1977.

4 Atatürkün söylev ve demeçleri, Ist, 1945, c. 1, s. 193—194.

5 Aykut Şeref. Kamalism. (CHP programının izahı), Its. 1936, s. 20—25.

6 *Տե՛ս* Мустафа Кемаль (Ататюрк). Путь новой Турции, М., 1934. т. 4, с. 333.

7 B. Lewis. op. cit., p. 339.

8 Այն հիմնադրվել է 1931 թ. նախկին Թուրքական պատմության ուսումնասիրման ընկերության փոխարեն։ Նորաստեղծ ընկերության կանոնադրության մեջ նշված էր, որ այն կոչված է «Նոր պատմական կոնցեպցիայի» լույսի տակ պարբերաբար իրականացնելու պատմական ուսումնասիրություններ։

9 Համաձայն Մուդրոսի զինադադարի, հուլներն օկուպացրին Արևմտյան Անատոլիան։ Տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М. 1927, с. III—XII. Раздел Азиатской Турции (По секретным документам б. Министерства иностранных дел) М. 1924; М. Шамсутдинов Планы раздела султанской Турции и использование ее в вооруженной интервенции Антанты против Советской России (1918—1919). —Турецкий сборник, М., 1958, էջ 32—47։

10 The „scourages of God"—St. Lane-Pool, Turkey. New York, 1914, էջ 3։

11 XIX դարում եվրոպական կապիտալիստական պետությունների կողմից Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրների գաղութացման և գաղութային կայսրությունների՝ Բրիտանական, Ֆրանսիական, Գերմանական և այլոց ստեղծման ժամանակ Եվրոպայում լայն տարածում գտավ հետամնաց Արևելքի և առաջադեմ Արևմուտքի կոնցեպցիան։ Տեսականորեն այն հիմնավորված էր Հեգելի պատմափիլիսոփայական սխեմայում։ Այն տարբերում էր այսպես կոչված «պատմական ժողովուրդներ», որոնց թվին էին վերագրվում հին հուլներն ու հռոմեացիները, եվրոպայի քրիստոնյա ժողովուրդները։ «Ոչ պատմական» ժողովուրդների շարքին էին վերագրվում Արևելքի ժողովուրդները։ Տե՛ս Гегель. Философия истории. Сочинения, т. VIII, М—Л. 1935.

12 TTK, Islam Ansiklopedisi, 10 cüz, Ist. 1949, 787.

13 U. Igdemir. Yılların içinden. Ankara. 1976, 203.

14 Ю. Тишанский По новой Турции. ОГИЗ, 1933, с. 120.

15 Türk tarihinin ana hatları. Ist. 1930.

16 Նույն տեղում։

17 Birinci Türk Tarih Kongresi (Konferanslar ve müzakere zabıtları), Istanbul, 1932. Հետագայում՝ TT Kongresi.

18 Tarihten evvel ve tarih fecrinde, I TT Kongresi.

19 Համաձայն Թուրքական պատմագրության ավանդույթների, Միջին Ասիա աշխարհագրական հասկացության մեջ Աֆեթ Ինանը ընդգրկում է նաև Պամիրն ու Ալթայը։

20 Այս զեկուցման հիմնական դրույթները հետագայում զարգացվեցին Dr. Afetinan. Afetinan. Türkiye halkının antropolojik karakterleri ve Türkiye tarihi (Türk ırkının vatanı Anadolu). Ankara, 1947 գրքում։

21 «Արիացի» բառը, որպես հնդեվրոպական ցեղերի անվանում, դանում ենք պատմության մեջ առաջին թուրքերի ի հայտ գալուց մի քանի հազարամյակ առաջ։ Տե՛ս История Древнего Востока. М., 1979, с. 349—350.

22 Dr. Afetinan, op. cit., 56.

23 Նույն տեղում, էջ 49։

24 Նույն տեղում։

25 I TT Kongresi..., s. s. 7—8.

26 *Այդ թեզը հետագայում իր արտահայտությունը գտավ լեզվի ծագման, այսպես կոչված «արևային թեորիայում»։*

27 *Թուրքիայում 30-ական թթ. հայտնվեցին անգամ բանկեր փքուն անվանումներով՝ «Սումերբանկ» («Շումերական բանկ») և «Էթիբանկ» («Խեթական բանկ»)։ Ժամանակակից գիտությունն ապացուցել է, որ խեթերենը պատկանում է հնդեվրոպական լեզուների շարքին։ Տե՛ս* J. G. Macqueen, The hittites and their contemporaries in Asia Minor, London, 1975; J. Melaart, Earliest civilizations on the Near East, London, 1965: **В. Иванов**, Хеттский язык М., 1963, **И. Дьяконов**, Предыстория армянского народа, Ереван, 1968. *Ժամանակակից որոշ թուրք գիտնականներ ընդունում են խեթերի հնդեվրոպական ծագումը։ Տե՛ս* Эрзен Афиф, Восточная Анатолия и Урарту. АН Арм ССР, Центр научной информации по общественным наукам, Научно-информационный бюллетень по общественным наукам, Серия III, № 10/64, Ереван, 1983, с. 19:

28 I TT Kongresi.., 117:

29 *Նույն տեղում, էջ 201։*

30 *Նույն տեղում, էջ 6։*

31 Tarih, Ist. 1932.

32 *Նույն տեղում, հ. 1, էջ 55, 59։*

33 *Նույն տեղում, էջ 69—71։*

34 *Նույն տեղում, էջ 74—75։*

35 *Նույն տեղում, էջ 103—105։*

36 *Օր.՝ Ժ. Մորգանին, Է. Պիթթարին և այլոց։*

37 Tarih, c. I, 41.

38 *Տե՛ս* История Древнего Востока, с. 181—182.

39 *Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 30, էջ 430։*

40 U. Igdemir. Yıllarin içinden, s. 303:

41 Դ. Ե. ԵՐԵՄԵԵՎ, *Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 26։*